ՉԻԼԻՆԳԱՐ

«Չիլինգարյան (Մամիկոնյան) տոհմ» պատմաազգագրական հասարակական կազմակերպության (Կազմակերպություն) եռամսյակային էլեկտրոնային ամփոփաթերթ

N 1 **ՍԵՊՏԵՄԲԵՐ** 2020թ.



http://chilingar.org/am

Սպասում ենք Ձեր հոդվածներին և առաջարկներին

chilingarngo@rambler.ru

ԼՈՒՐԵՐ

2020թ. հունվարի 25-ին Երևան քաղաքում տեղի ունեցավ Կազմակերպության Ավագների խորհրդի հերթական նիստը, որի ընթացքում քննարկվեցին Կազմակերպության առաջիկա անելիքները: Ավելին

ՀԱՐԳԵԼԻ ՏՈՀՄԱԿԻՑ

«Չիլինգարյան (Մամիկոնյան) տոհմ» պատմաազգագրական հասարակական կազմակերպության և իմ կողմից շնորհավորում եմ բոլորիս մեր տոհմակիցների ջանքերով ստեղծված «Չիլինգար» էլեկտրոնային եռամսյակային ամփոփաթերթի առաջին համարի թողարկման առթիվ:

Հուսով եմ, որ այն մեր բոլորի ջանքերով հասանելի կդառնա մեր տոհմի յուրաքանչյուր անդամի՝ դրանով իսկ, ի թիվս այլ միջոցառումների, կդառնա մեր տոհմակիցներին կապող ևս մեկ օղակ:

Վստահ եմ, որ «Չիլինգար» եռամսյակային ամփոփաթերթը սիրելի կլինի ձեզանից յուրաքանչյուրին, և դուք հնարավորինս կաջակցեք մեր տոհմակիցներին հետաքրքրող բազմաբնույթ տեղեկատվություն ստանալու և տարածելու գործում:

Մաղթում եմ Չիլինգարյան (Մամիկոնյան) տոհմի բոլոր տոհմակիցներիս քաջ առողջություն և հաջողություններ:

Հաջողություններ եմ մաղթում և իմ անձնական աջակցությունն եմ հայտնում նաև «Չիլինգար» էլկետրոնային ամփոփոփագրի խմբագրական կազմին և թերթի կազմմանը մասնակցություն ունեցած և հետագայում համագործակցող անձանց:

Հուսով եմ, սիրելի տոհմակից, քո անմիջական մասնակցությամբ «Չիլինգար»-ի համարները կլինեն մշտական, բազմաբովանդակ ու հետաքրքիր:

Հարգանքով՝

«Չիլինգարյան (Մամիկոնյան) տոհմ»
պատմաազգագրական հասարակական
կազմակերպության նախագահ Մելս Չիլինգարյան

Կազմակերպության 2020թ. հունվարի 25-ի նիստի արձանագրությունը

Արձանագրություն

25.01.2020թ. **ք Երևան**

«Չիլինգարյան /Մամիկոնյան/ Տոհմ” ՊԱՀԿ ավագների խորհրդի նիստի.

«Չիլինգարյան /Մամիկոնյան/ Տոհմ» ՊԱՀԿ (Կազմակերպություն) ավագների խորհուրդին մասնակցում էին 14 հոգի (քվորումն ապահովված էր, ցանկը կցվում է):

Կազմակերպության գործադիր տնօրեն Արթուր Չիլինգարյանը խորհրդի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգը, որի առնչությամբ խորհրդի անդամների կողմից ներկայացվեցին առաջարկություններ: Առաջարկությունների ներառմամբ Խորհրդի կողմից հաստատվեց նիստի օրակարգը (կցվում է):

Հարցերի ըստ հերթականությամբ քննարկումների արդյունքում միաձայն քվեարկությամբ որոշվեց՝

1. Յուրաքանչյուր երեք ամիսը մեկ գումարել Կազմակերպության Ավագների խորհրդի նիստ, որը հերթականությամբ պետք է տեղի ունենա որևէ տարածքում՝ ըստ Կազմակերպության կողմից հաստատված տարածքների հերթականության:
2. Ստեղվել հանձնաժովող, որը պետք զբաղվի էլեկտրոնային տոհմածառի ընդլայնմամբ, տարածքային ստորաբաժանումների հետ տարվող աշխատանքների բարելավմամբ, ինպես նաև լիազորություն տրվեց հանձնաժողովին հարկ եղած դեպքում տարածքային ստորաբաժանման պատասխանատուի փոփոխման հարց բարձրացնել: Հանձնաժողովի անդամներն են՝ Ահարոն Չիլինգարյան, Սամվել Գրիգորյան, Արթուր Չիլինգարյան:
3. Ստեղծվել Կազմակերպության Օպերատիվ Շտաբ, որը պետք է զբաղվի կազմակերպության ընթացիկ գործունեությամբ, որին վերապահվեցին նաև ընթացիկ գործունեությանն առնչվող հարցերի դեպքում օպերատիվ որոշումների կայացման լիազորություններ՝ դրանց վերաբերյալ տեղեկատվությունը ՀԿ Նախագահին տրամադրելու հանձնարարությամբ: Շդաբի անդամներն են՝ Կարեն Առաքելյան , Նորիկ Սարգսյան, Արտակ Չիլինգարյան և Արթուր Չիլինգարյան
4. Յուրաքանչյուր տարի, դեկտեմբեր ամսին կազմակերպել դրամահավաք ճաշկեույթ:
5. Անդամավճարների հետ կապված,2020 փետրվար ամսից այսուհետև Ավագանու անդամները կվճարեն 3000 և ավել գումար, իսկ տոհմակիցները 500 դրամ:

Չիլինգարյան /Մամիկոնյան/

Տոհմ” ՊԱՀԿ տնօրեն **Արթուր Չիլինգարյան**

25.01.2020թ.

Նիստին մասնակցածների ցանկ

1. Բադալյան Վազգեն Արշակի
2. Գրիգորյան Սամվել Ազատի
3. Սարգսյան Արմեն Ժորայի
4. Չիլինգարյան Ահարոն Հարությունի
5. Չիլինգարյան Արտաշես Արծրունի
6. Չիլինգարյան Սաղաթել Հենրիկի
7. Առաքելյան Կարեն
8. Ենոք Վարազդատի Չատինյան
9. Չիլինգարյան Առնո Մելսի
10. Առնո Չիլինգարյան
11. Սեյրան Արծրունի Չիլինգարյան /28.05
12. Սարգսյան Նորիկ Գևորգի
13. Չիլինգարյան Արթուր
14. Չիլինգարյան Անդրեաս
15. Մելս Չիլինգարյան

«ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ (ՄԱՄԻԿՈՆՅԱՆ) ՏՈՀՄ» ՊԱՏՄԱԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԿ

«Չիլինգարյան /Մամիկոնյան/տոհմ» – պատմաազգագրական հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 2010 թվականի հունիսին 25-ին՝ նախաձեռնող խմբի կողմից: Նույն թվականի նոյեմբերի 14-ին տեղի ունեցավ կազմակերպության առաջին ընդհանուր ժողովը:

ՀԿ-ի ստեղծմանը նախորդել են Չիլինգարյան/Մամիկոնյան/ տոհմի ուսումնասիրման հսկայածավալ հետազոտական և բանահավաք աշխատանքներ,որոնք հավաքագրվել, մշակվել են Էդվարդ Սարգսյանի “Մամիկոնյան – Չիլինգարյան տոհմ” փաստատարեգրական գրքում:

Հավաքագրված տեղեկությունների հիման վրա հեղինակը 1976 – 1980 թվականների ընթացքում կազմել է Մամիկոնյանների – Չիլինգարյանների 400 տարվա տոհմածառը: Այն ամփոփում է մոտ 3000 ազգակիցների շարունակական կառուցվածքը, սկսած 1650 թվականից: Ներկայումս շարունակվում են ուսումնասիրությունները ծառի արմատներին հասնելու ուղղությամբ, ինչպես նաև նորագույն սերունդների ճյուղերի լրացման աշխատանքները: Տոհմածառը ընդգրկում է նաև տոհմակիցների պատմական հայտնի միգրացիաները: 2010թ. ավարտին կազմակերպությունը իր շուրջը միավորել է 3250 անդամներ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Մեր կազմակերպության նպատակներն են.

– Համախմբել ամբողջ աշխարհի՝ ներառյալ ազգանունը փոխած Չիլինգարյաններին:

– Ուսումնասիրել տոհմի պատմությունը, փորձել հասնել տոհմածառի արմատներին:

– Կառուցել տոհմածառի բացակայող ճյուղերը:

– Իրականացնել տարբեր տիպի ծրագրեր, նախաձեռնություններ, մտահղացումներ տոհմակիցների միջև մշտական կապի հաստատման,մշակույթային արժեքների պահպանման, մատաղ սերնդիհայեցի դաստիարակման, տաղանդավոր երեխաների աջակցման, տոհմի մեծերի մեծարման, տոհմակիցների համար բարեկեցիկ ապագայի հիմքեր ստեղծելու ուղղությամբ:

– Ծավալել հայանպաստ և հայրենանպաստ գործունեություն՝ օգտագործելով Չիլինգարյան /Մամիկոնյան/ տոհմի ինչպես ընդհանրական, այնպես էլ առանձին անդամների մտավոր, հոգևոր և նյութական ներուժը:

Կազմակերպությունը ունի իրավաբանական անձի կարգավիճակ- ունի զինանշան և դրոշ:

Կազմակերպության սեփականությունը գոյանում է անդամավճարներից, նվիրատվություններից, նվիրաբերումներից և այլն:

Կազմակերպությունը համագործակցում է ինչպես ՀՀ պետական և ոչ պետական մարմինների, տեղական, միջազգային և արտասահմանյան կազմակերպությունների այնպես էլ անհատների հետ:

Կազմակերպությունը բաց է բոլոր տոհմակիցների համար:

Կազմակերպության բարեկամ կարող է լինել յուրաքանչյուր ոք, ով համակրում է Չիլինգարյան/Մամիկոնյան/ տոհմին և աջակցում կազմակերպության նպատակների ու խնդիրների իրականացմանը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՆԻ 13 ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽՈՒՄ

Նավուր-Բերդ, Ճամբարակ, Ջուջևան-Նոյեմբերյան, Քարինջ-Մարց/Մոտկորաձոր-Թումանյան/, Վանաձոր, Վարդաբլուր-Ստեփանավան, Դիլիջան, Չարենցավան, Հրազդան, Վանք/ԼՂՀ/, Ստեփանակերտ/ԼՂՀ/, Աբովյան Երևան/Տավուշցիներ, Արծվաշենցիներ, Դաշքեսանցիներ, Գետաշենցիներ, Վարդաբլուրցիներ, Արևմտյան Հայաստանից գաղթածներ և այլ վայրերից եկածներ/:

ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ ՏՈՀՄԻ ՓՈԽԱԾ ԱԶԳԱՆՈՒՆՆԵՐՆ ԵՆ՝

Համբարձումյան Ավանեսյան Հարությունյան Հովսեփյան Աբրահամյան Դավթյան Մկրտչյան Սահակյան Գրիգորյան Դավիդյան Դարբինյան և այլն.

Սարգսյան Բասենցյան Խաչատրյան Բաղալյան Տեր-Գրիգորյան Պետրոսյան Հովհաննիսյան Առաքելյան Հայրապետյան Դանիելյան Ղազարյան Վարդանյան Գալստյան Հովաղեղյան Ադամյան Տեր-Պողոսյան Չատինյան Աղասյան Ասատրյան Բաղդասարյան Անանյան Օհանջանյան Մկրտումյան

Ինչպես նաև Չիլինգարյան ազգանվան բոլոր փոխակերպումները՝ Չիլինգիրյան , Չիլինկիրյան, Տչիլինգարյան, Չիլինգարով, Չիլինգարիդի, Չիլինգարիշվիլի և այլն:

Քո մասին, տոհմակից

Սարգսյան Էդվարդ Գևորգի - Քիմիկոս, գրող-գիտնական, Մամիկոնյան-Չիլինգարյան տոհմի պատմության և տոհմածառի հեղինակ, հայտնաբերել է Եղեգնաձորի աշխարհահռչակ քարանձավները, հանդիսանում է Հայաստանում քարանձավագիտության հիմնադիրը, Նյու-Յորքի նշանավոր Յունիոն Սքվեր Մեմորիալի հեղինակ (Ա. Ժելեզնյակի հետ): Ընդգրկվել է ԱՄՆ Կոնգրեսի տարեգրքում և պաշտոնապես մտել ԱՄՆ-ի պատմության մեջ, ամերիկյան կառավարության կողմից տացել է "Նոբելյան մրցանակի դափնեկիր կամ նրան հավասարեցված անձ" որակավորումը: Ծնվել է 1950 թվականի հուլիսի 17-ին Լոռվա Վարդաբլուր գյուղում: 1967 թվականին ոսկե մեդալով ավարտել է Ստեփանավանի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1972 թվականին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը, անցել աշխատանքի գիտությունների ակադեմիայի ֆիզիկական քիմիայի գիտահետազոտական ինստիտուտում, որպես գիտական աշխատող: 1973 թվականին պաշտպանել է գիտական թեզ, ստացել քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1975 թվականին Էդվարդ Սարգսյանն իր գիտական աշխատանքի համար արժանացել է Հայաստանի Լենինյան կոմերիտմիության թափնեկրի կոչման: Ուսանողական տարիներից զբաղվել է լեռնագնացությամբ, դարձել ալպինիզմի Երևանի չեմպիոն: Աշխատել է Երևանի ,,Նաիրիտ,, գործարանում, ՄԱԿ–ի հայաստանյան գրասենյակում: 2000 թվականից ապրում, աշխատում, ստեղծագործում է ԱՄՆ-ում: 2001 թվականի սեպտեմբերի 11-ին Նյու Յորքի ահաբեկչության հաջորդ օրը մեծ դժվարություններով ահաբեկչության անմեղ զոհերի հիշատակին ուկրաինացի քանդակագործ Ժելեզնյակի հետ միասին պատրաստել են և Մանհեթենի կենտրոնական հրապարակում տեղադրել հուշարձան մոմ, որի համար ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնից և Նյու Յորքի քաղաքապետ Ջուլիանո ….-ից: Էդվարդ Սարգսյանը Չիլինգարյան-Մամիկոնյան դարբին-զինագործների տոհմի պատմության ուսումնասիրությունով զբաղվում է վաղ դպրոցական տարիքից: Տասչորս տարեկան հասակում Ստեփանավանում՝ մորեղբոր կիսաշեն տանը ստեղծել է հրաձգարան, ուր իր հասակակից երեխաների հետ պարապում էր հրաձգությամբ: Մանկական այդ հրապուրանքը մեկ տարի անց դառնում է պետանվտանգության ծառայությունների համար ,,լուրջ,, գործ, որի համար հալածվում է թե ինքը, թե ծնողները: 1980-ական թվականների երկրորդ կեսին, երբ աշխատում էր ,,Նաիրիտ,, միավորումում, դարձավ ծավալված բնապահպանական շարժման առաջամարտիկներից, հետագայում մասնակցել է արցախյան շարժմանը, Բերդաձորի ինքնապաշտպանությանը:

1995 թվականի սեպտեմբերի 8-ին, անցնելով թուրքական զորքի միջով, Բայազետի կողմից բարձրացել է Արարատ: Այժմ շարունակում է Մամիկոնյան-Չիլինգարյան տոհմի պատմության ուսումնասիրությունները, որի երկրորդ գիրքը լուս կտեսնի շուտով: 2010 թվականին ընտրվել է ,,Չիլինգարյան /Մամիկոնյան/ տոհմ,, պատմա-ազգագրական հասարակական կազմակերպության պատվավոր նախագահ: Էդվարդ Սարգսյանի գրչին են պատկանում գիտական, պատմական, հնագիտական բազմաթիվ հոդվածներ, որոնք տպագրվել են Հայաստանյան և արտասահմանյան բազմաթիվ ամսագրերում: Ամուսնացած է, ունի երեք զավակ, հինգ թոռ: Էդվարդ Սարգսյանի հեղինակած գրքերն են. ,,Անդունդների կանչը,,-1986թ., /Սովետական գրող/, ,,Քարանձավները բացում են գաղտնիքները,,-1989թ. /Հայաստան/, ,,Արարատից հենց նոր իջա,,-1997թ. ,,Մամիկոնյան-Չիլինգարյան տոհմը,,-1998թ.

Չիլինգարյան Յուրի Սերգեյի - ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Ծնվել է 1938 թ. սեպտեմբերի 22-ին Երևանում: 1955 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի թ.58 ռուսական միջնակարգ դպրոցը, ընդունվել Մոլոտովի անվան Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ, որն էլ ավարտել է 1960 թ. որպես միջուկային ֆիզիկայի գծով մասնագետ: ԵՊՀ-ում սկսելով ասիստենտի պաշտոնից՝ նա արագորեն հաղթահարեց ռադիացիոն ֆիզիկայի պրոբլեմային լաբորատորիայի ինժեների, առաջատար ինժեների, լաբորատորիայի վարիչի պաշտոնեական աստիճանները և 1972 թ. ընտրվեց օպտիկայի ամբիոնի վարիչ: Այդ պաշտոնն զբաղեցնելով շուրջ 35 տարի՝ 2007 թվականից մինչև վախճանվելը մնաց որպես այդ ամբիոնի պատվավոր վարիչ: 1985 – 2000 թթ. նաև գլխավորեց ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը: 1968 թ. Լենինյան ու Լոմոնոսովյան մրցանակների դափնեկիրներ Ս. Ախմանովի (գիտական ղեկավար) ու Ռ. Խոխլովի ղեկավարությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1984 թ.՝ դոկտորական (Մոսկվա): Մինչև ԽՍՀՄ փլուզումը Յուրի Չիլինգարյանը եղել է ԽՍՀՄ ‹‹Կոհերենտ ու ոչ գծային օպտիկա›› պրոբլեմի գծով գիտական խորհրդի, ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեի ‹‹Լազերներ›› ծրագրի գծով համակարգող խորհրդի, ԽՍՀՄ ԳԱ ‹‹Օպտիկա›› խորհրդի ‹‹Հարթ (պլանար) օպտիկա›› բաժանմունքի, ‹‹Թելքաօպտիկական կապ›› միության միջգերատեսչական խորհրդի անդամ: 1996 թ. Յուրի Չիլինգարյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, 2006 – 2016 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ: 2009 թ. նա արժանացել է Հայաստանի գիտության վաստակավոր գործչի բարձր կոչման: Աշխարհի հեղինակավոր հանդեսներում հրապարակված ու միջազգային գիտաժողովներում ներկայացված ավելի քան 250 հոդվածների ու զեկուցումների հեղինակ էր, ուներ 9 արտոնագիր, 2 մենագրություն, 5 դասագիրք և ուսումնական ձեռնարկ: Նրա անմիջական ղեկավարությամբ 10 գիտնական պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն, օպտիկայի ամբիոնի 4 աշխատող նրա զարգացրած ուղղությունների գծով պաշտպանել են դոկտորական ատենախոսություն: Յուրի Սերգեյի Չիլինգարյանը վախճանվել է 2016 թ. նոյեմբերի 28-ին Երևանում… Աճյունը հանգչում է Քաղաքային պանթեոնում:

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ (Չիլինկիրյան Ռուբեն Հովհաննեսի)

Հայ բանաստեղծ, արձակագիր, բժիշկ, ծնվել է 12.2.1885 Կ.Պոլսին մերձակա Սիլիվրի գյուղաքաղաքում:

Սովորել է ծննդավայրի Ասքանազյան նախակրթարանում, Պարտիզակի ամեր. վարժարանում: Ավարտել է Կ.Պոլսի Պերպերյան վարժարանը, Շվեյցարիայի Լոզան քաղաքի համալսարանի բժշկական ֆակուլտետը, աշխատել է որպես բժիշկ Լոզանի հիվանդանոցներից մեկում: 1915-ին վերադարձել է Կ.Պոլիս, ձերբակալվել է և աքսորի ճանապարհին գազանաբար սպանվել օգոստոսի 26-ին այն խմբի հետ, որի մեջ էին նայև Վարուժանը, Սիամանթոն և ուրիշներ: Սևակի ստեղծագործությունը վերաբերում է որպես հայկական նեոռոմանտիզմ բնութագրվող գրական ուղղությանը, սակայն աշխարհայացքով, գեղարվեստական մտածողությամբ ու ոճով ինքնուրույն տեղ է գրավում 20-րդ դ. սկզբի արևմտահայ գրական շարժման մեջ:

Ստեղծագործական աշխատանք

Սևակի առաջին բանաստեղծությունը «Բաժանման խոսքեր» տպագրվել է 1905–ին, «Մասիս» հանդեսում: 1910–ին հրատարակվել է նրա «Կարմիր գիրքը» բանաստեղծությունների ժողվածուն:

Սևակի ստեղծագործությունը վերաբերում է որպես հայկական նեոռոմանտիզմ բնութագրող գրական ուղղությունը, սակայն աշխարհայացքով, գեղարվեստական մտածողությամբ ու ոճով ինքնուրույն տեղ է գրավում XX դ. սկզբի արևմտահայ գրական շարժման մեջ: Սևակը գրել է սիրո, բնության, սոցիալական, ազգային–հայրենասիրական թեմաներով:

Սևակը առավելապես հայտնի է որպես քնարերգու բանաստեղծ: Շարունակելով հայ սիրային քնարերգության ավանդույթները՝ Սևակը ստեղծել է սիրո երգերի մի ամբողջ շարք, որն աչքի է ընկնում զգացմունքի նրբությամբ ու խորությամբ, արտահայտչական միջոցների թարմությամբ: Նրա պոեզիային բնորոշ են լեզվի մաքրությունն ու հարստությունը, տաղաչափական արվեստի բազմազանությունը, երաժշտականությունը:

Սևակի արձակ գործերը, ժանրային իմաստով, բազմազան են՝ հոդվածներ, հանրամատչելի զրույցներ, քննադատական խորհրդածություններ: Ընտանիքը

Ամուսնացած էր գերմանացի գնդապետ Ֆրանս Ապելի դստեր՝ Յանի Ապելի հետ: Ուներ երկու երեխա: Առաջնեկի անունը Լևոն էր: Երբ ընտանիքի հետ վերադարձավ Կ.Պոլիս իր ժողովրդի կողքին լինելու համար, դարձավ «Մեծ Եղեռնի» զոհ, սակայն նրա կինը ողջ մնաց: Այժմ նրա առաջնեկը՝ Լևոնը, ապրում է Կանադայում: Նրանք բոլորն էլ հայրենասեր մարդիք են եղել:

ԵՐԳ ԵՐԳՈՑ

Երա՞զ, տեսի՞լ, անգո ստվե՞ր մ'անհոգի,
Ճառագայթի, փրփուրի խա՞ղ մը տարտամ:
Քմայապաշտ ծաղի՞կ մ'արդյոք ցընորքի,
Քու մշուշոտ գիծերուդ ի՞նչ անուն տամ.
Երա՞զ. տեսի՞լ, անգո ստվե՞ր մ'անհոգի:
Քու կապույտիդ վճիտ, աղվոր ջուրերու
Եթերային անրջանքին է հանգույն.
ՈՒ քու կարմի'ըդ Պենկալյան վարդերու
Երազամած կարմըրության պես տժգույն.
Գոգն աչերուդ կապույտն ունիս ջուրերու:
Արցունքիդ պես նայադներ պար կը դառնան:
Այդ ի՞նչ հեշտանք որ շրթներուդ մեջ
կը'մպես.
Շունչդ գինով է հովերու պես գարնան,
Ձայնդ տարփոտ՝ աղբյուրներու երգին
պես...
Արցունքիդ մեջ նայադներ պար կը դառնան:
Կը հմայեն զիս քու աչերդ, կը շոյե՛ն,
ՈՒ մարմինեդ ծորող խունկը մեղավո'ր,
Ավելի քաղցր է Քանանու գինիեն...
Հազարբուրյան այս պատարա՞գն է աղվոր,
Թե լո'ւյծ աչերդ որ մութ հոգիս կը շոյեն:
Հրաշագո ո՛հ, քու անդրիդ բյուրեղե.
Սրունքներուդ սարսռացող ձյունն հրաշեկ,
ՈՒ անանո՛ւն ցոլքը որ քեզ կողողե,
Մորթիդ թաքուն գանգուրներուն խուրձը
շեկ...
Հրաշագո'... ո՛հ, քու իրանդ բյուրեղե:
Տենչերուս վրա պիտի հսկեմ այս գիշեր
Որ բազուկնե՛րըս չը փընտռեն քեզ իմ քով,
Սիրտս ո՛ւր էր որ կուրծքեդ ոչինչ չը հիշեր,
Մինչև առտու պիտի հալեր արցունքով...
Կիրքերուս վրա պիտի հսկեմ այս գիշեր:
Իզո՛ւր: Հոգիս թաղվել կուզե հուլորեն
Ստինքներուդ մտերմությանը մեջ կույս.
ՈՒ անութիդ որոշ ծալքերը նորեն
Գիտեմ որ զիս պիտի տանջեն մինչև լույս...
Քու մե'ջդ հոգիս թաղվել կուզե հուլորեն:
Տժգույն աղջի'կ, հյուսիսայգի աչքերով,
Կոպերուդ վրա ու բիբերուդ մեջ խոնավ
Այդ ի՞նչ անճառ երանություն, ի՞նչ գորով...
Ո'չ մեկ արգանդ քե՛զ պես հրաշք չը ծնավ,
Տժգո՛ւյն աղջիկ, հյուսիսայգի աչքերով:

Մասնագիտական քեզ համար

Սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն

Նյութը «Սպառողների ասոցիացիա»-ի
իրավաբան՝ Սյուզաննա Չիլինգարյան

Բոլորս Սպառող ենք, հետևապես պետք է լավ իրազեկված և տեղեկացված լինենք մեր իրավունքների մասին, ինչը հնարավորություն կտա լիարժեք և բազմակողմանի պաշտպանել, թույլ չտալով որևէ տեսակի խախտում:

Այսօր մեր երկրում սպառողները որքանո՞վ են տեղյակ սպառողների իրավունքների մասին:

-Ինչպես շատ ոլորտներում, այնպես էլ շուկայում, շատ հաճախ խախտվում են սպառողների իրավունքները լոկ այն պատճառով, որ սպառողների մեծ մասը հստակ չտիրապետելով համապատասխան օրենքների դրույթներին՝ չի պատկերացնում իր իրավունքները և հետևողականորեն պահանջատեր չի դառնում իր խախտված իրավունքների վերականգնման գործում:

-Ի՞նչ կարող է անել սպառողը իր իրավունքների մասին ավելի լավ իմանալու, իր իրավունքները պաշտպանելու համար:

-Միանշանակ, կարդալ և ուսումնասիրել համապատասխան օրենքները («Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենք), ծանոթանալ սեփական իրավունքների պաշտպանության դրույթներին և գնված ապրանքը տեղում, հենց խանութի ներսում լավ ուսումնասիրել, փորձարկել և նոր գնել:

Եթե գնված ոչ պարենային ապրանքը խանութը չի փոխանակում կամ հետ չի վերցնում, ապա սպառողը կարող է դիմել կամ Էկոնոմիկայի նախարարության սպառողների պաշտպանության և որակի տեսչություն, կամ սպառողների շահերը պաշտպանող կազմակերպություններ, կամ տեղական ինքնակառավարման մարմիններում գործող առևտրի և սպասարկումների բաժին, քանզի Սպառողների իրավունքների պաշտպանությունը համակարգ է, որում պետական և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող գործողությունները միտված են սպառողի և տնտեսվարող սուբյեկտի միջև իրավահարաբերությունների կարգավորմանը, հետևապես՝ **Սպառողին միշտ պետք է հարգել և իրավունքների հետ հաշվի նստել**:

Վաճառողին ի՞նչ պահանջներ կարող է ներկայացնել սպառողը թերություններով ապրանք գնելիս:

Սպառողը, որին վաճառվել է ոչ պատշաճ որակի ապրանք, և եթե վաճառողը դրա թերությունների մասին նախապայման չի սահմանել, իրավունք ունի իր ընտրությամբ պահանջել՝ ա) ապրանքի թերությունների անհատույց վերացում կամ սպառողի կողմից դրանց վերացման ծախսերի հատուցում, բ) գնման գնի համաչափ իջեցում, գ) նմանօրինակ նմուշի (մոդելի, ապրանքատեսակի) ապրանքով փոխարինում, դ) այլ նմուշի (մոդելի, ապրանքատեսակի) ապրանքով փոխարինում՝ գնման գնի համապատասխան վերահաշվարկով, ե) առուվաճառքի պայմանագրի լուծարում (հոդված 16):

Թերևս քչերն են տեղեկացված, որ 2016թ.-ի հուլիսի 7-ից ուժի մեջ է մտել «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները և 23-րդ հոդվածը վերաբերում է պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը փոխարինելու կամ վերադարձնելու սպառողների իրավունքների իրացմանը: Դրանում, մասնավորապես, ասվում է՝ սպառողն իրավունք ունի 14 օրվա ընթացքում «փոխարինել պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը նմանօրինակ ապրանքով:

Պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը փոխարինվում է, եթե նշված ապրանքը չի օգտագործվել, պահպանված են դրա ապրանքատեսքը, սպառողական հատկությունները, կապարակնիքները, ապրանքային պիտակները, ինչպես նաև վաճառված ապրանքի հետ սպառողին տրված ապրանքային կամ դրամարկղային չեկը:

Ի՞նչ անել, եթե սպառողին վաճառվել է թերություններով ապրանք:

Սպառողի կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման, եթե վնասը պատճառված է ապրանքի (աշխատանքի) սահմանված ծառայության կամ պիտանիության ժամկետի ընթացքում:

Ի՞նչ ժամկետներում պետք է սպառողը ներկայացնի պահանջ ապրանքի թերությունների վերաբերյալ:

Ապրանքի պիտանիության ժամկետը որոշվում է ապրանքի արտադրման օրից հաշվարկված այն ժամանակահատվածով, որի ընթացքում այն պիտանի է օգտագործման համար կամ այն թվականով, մինչև երբ ապրանքը պիտանի է օգտագործման համար: Ապրանքի պիտանիության ժամկետի տևողությունը պետք է համապատասխանի նորմատիվ փաստաթղթերով սահմանված ապրանքի անվտանգության պարտադիր պահանջներին: Սեզոնային ապրանքների համար (կոշիկ, հագուստ և այլն) այդ ժամկետները հաշվարկվում են համապատասխան սեզոնի սկսման պահից, որը որոշում է կառավարությունը: Ապրանքի երաշխիքային, ինչպես նաև ծառայության ժամկետները հաշվարկվում են ապրանքն սպառողին հանձնելու օրից սկսած: Եթե հանձնման օրը հնարավոր չէ որոշել, այդ ժամկետները հաշվարկվում են ապրանքի արտադրման օրից սկսած:

Սննդամթերք կամ խաղալիք գնելիս Սպառողը ինչի՞ն ուշադրություն դարձնի:

«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի համաձայն սննդամթերքի մակնշմանը՝

1) անվանում.

2) բաղադրություն (կաթի և կաթնամթերքի դեպքում՝ տեղեկատվություն պարենային հումքի մշակման ենթարկված լինելու վերաբերյալ)

3) **սննդամթերքի մեջ օգտագործված սննդային հավելումների**ն (եթե այդպիսիք կան) և դասիչները.

4) զտաքաշը կամ ծավալ.

5) արտադրման ամսաթիվ.

6) պիտանիության ժամկետ.

7) պահման պայմաններ.

8) արտադրողի, ներմուծողի, վերջիններիս ներկայացուցչի անվանումը (անունը), գործունեության (բնակության) հասցեն.

9) սննդամթերքի **պատրաստմանը վերաբերող ցուցումներ կամ սահմանափակումներ**.

10) **ծագման երկիր**.

14) **սննդամթերքում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների օգտագործմամբ ստացված բաղադրիչների առկայության մասին տվյալներ և այլն**:

Կարևոր է, որ սննդամթերքի **մակնշումը լինեն ընթեռնելի**, ամբողջական ու հավաստի, որը հնարավոր կդարձնի սննդամթերքի և դրա արտադրողի նույնականացումը:

Մանկության շրջանում խաղալիքները համարվում են երեխաների անբաժանելի ընկերները, ոչ մի երեխա չի կարող անտարբեր անցնել խաղալիքների խանութի կողքով, չխնդրելով ծնողին գնել իր հավանած խաղալիքը: «Խաղալիքների անվտանգության տեխնիկական կանոնակարգ»-ով մանկական խաղալիքները պարտադիր սերտիֆիկացվում են, քանզի մանկական ապրանք գնելիս ծնողի առաջին գործը հայերենով սերտիֆիկատ պահանջելն է, որը պետք է պարունակի տեղեկատվություն արտադրանքի տվյալների, թունավոր նյութերի առկայության կամ բացակայության մասին, որ տարիքային խմբի երեխայի համար է այն նախատեսված և որ կազմակերպությունն է այն ներմուծել:

Նոր օրենսդրական նախաձեռնության մասին:

Դեռևս կան խանութներ, որտեղ գրություններ են փակցված, թե «***գնված ապրանքը հետ չի ընդունվում***». Սա օրենքի կոպիտ խախտում է:
Էկոնոմիկայի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքում, ինչպես նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագիծը, որի համաձայն, վաճառողը սպառողներին տեսանելի վայրում պետք է փակցնի տեղեկատվություն՝ սպառողի կողմից պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը փոխարինելու և վերադարձնելու պայմանների վերաբերյալ, ինչպես նաև փոխարինման կամ վերադարձման ոչ ենթակա պատշաճ որակի ոչ պարենային ապրանքների անվանացանկը, որը սահմանելու է կառավարությունը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում առաջարկվում է լրացում և փոփոխություններ կատարել, որոնց համաձայն՝ եթե վաճառողը չհետևի օրենքի սահմանված կետին, ապա կնախազգուշացվի, իսկ նույն արարքը մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ կրկնելու դեպքում կտուգանվի նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով: Այնուամենայնիվ, գոյություն ունեն որոշակի ապրանքներ, որոնց վերադարձն օրենքով սահմանված չէ: ՀՀ կառավարության կողմից ընդունված 30.01.2002թ.-ի N 77 որոշման անվանացանկով ապրանքները Սպառողը իրավունք չունի հետ վերադարձնել, մասնավորապես՝ էլեկտրոնային բարդ սարքավորումները, անհատական պատվերով պատրաստված և մատակարարված կահույքը, արդուզարդերը, դեղորայքը և անձնական հիգիենայի պարագաները, պարֆյումերակոսմետիկական ապրանքները, տեքստիլ ապրանքները, կենդանիներ և բույսերը (օրենքի 78-րդ կետ):

Որպես Սպառողների իրավունքների պաշտպան ինձ համար ընդունելի մեկ բանաձև կա. սպառողների իրավունքների պաշտպանությունը լիարժեք իրականացնելու համար, անհրաժեշտ է, որ այդ ոլորտի պաշտոնյաներն ու հասարակական կազմակերպությունները միմյանց հետ սերտ համագործակցեն, դրանով իսկ ամրապնդելով սպառողների իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավական դաշտը՝ հնարավորինս կանխելով անորակ ապրանքների տարածումն ու սպառումը շուկայում:

Միշտ եղեք իրազեկ և պաշտպանված:

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

«Չիլինգարյան (Մամիկոնյան) տոհմ» պատմաազգագրական հասարակական կազմակերպության

Նյութը նախապատրաստել է
Նորիկ Սարգսյանը

Հարգելի տոհմակից.

Մարդու անցած ճանապարհը՝ նրա կենսագրությունն է, որն արտացոլում է նրա կյանքի անձնական, գիտական, մշակութային և հասարակական ամբողջ գործունեությունը, արտացոլում նրա հաջողություններն ու անհաջողությունները, բոլոր տեսակի վայրիվերումները: Հասարակական կազմակերպության պարագայում այն կոչվում է տարեգրություն: Ահա մեր՝ «Չիլինգարյան (Մամիկոնյան) տոհմ պատմաազգագրական հասարակական կազմակերպության» տարեգրությունը, որն արտացոլում է կազմակերպության ստեղծման հետ կապված բոլոր հանդիպումների ժամանակագրությունը, կազմակերպության ստեղծումն ու հետագայում ծավալած գործունեությունը՝ մինչև 2014 թվականի նոյեմբեր:

Արվածը շատ է թե քիչ՝ թող դատի մեր յուրաքանչյուր տոհմակիցը, սակայն քիչ չեն եղել նաև ծրագրեր և նախաձեռնություններ, որոնք ձախողվել են կամ չեն իրագործվել տարբեր պատճառներով. մի դեպքում մեզ չի բավականացրել մասնագիտական հմտությունը, մեկ այլ պարագայում՝ ֆինանսական ներդրումները, կամ էլ այդ ծրագրերը եղել են խիստ ռոմանտիկ և իրականությունից կտրված: Պատրաստելով կազմակերպության տարեգրությունը, մենք հաշվի ենք առել, որ այն ոգևորման նոր ալիք կբարձրացնի մեր տոհմակիցների մոտ և այն կտարածվի Վանքից՝ Վարդաբլուր, Ջուջևանից՝ Նավուր, Մոտկորա Ձորից (Քարինջ, Մարց)՝ Երևան, տարածվելով աշխարհով մեկ, կմտնի Չիլինգարյանների արյուն կրող բոլոր տներն ու ավելի կհամախմբի մեր փառապանծ տոհմը: Մոտ ապագայում մեր տարեգրությանը միս ու արյուն կտան համապատասխան բացատրական հոդվածներն ու լուսանկարները, որոնք այն կդարձնեն առավել բովանդակալից և գրավիչ:

Հավատում եմ, որ ձեզանից ամեն մեկդ ձեր առանձնահատուկ փայաբաժինը կունենաք Խոջա Վասիլի մեծ տոհմի միավորման մեր որդեգրած սուրբ գործին:

Ամենաջերմ մաղթանքներով՝ Մելս Չիլինգարյան

«Չիլինգարյան (Մամիկոնյան) տոհ»
պատմաազգագրական ՀԿ նախագահ,գեներալ-մայոր

2007 թվական

27 մայիսի
Սեյրան Չիլինգարյանի /Նավուր/ նախաձեռնությամբ տեղի ունեցավ Չիլինգարյանների տոհմական առաջին հավաքը «Աշտարակի ձոր» հանգստյան գոտում:
15 հուլիսի
Չիլինգարյանների տոհմական երկրորդ հավաքը «Աշտարակի ձոր», հանգստյան գոտու գետերի խառնման տեղում:
27 օգոստոսի
Տոհմակիցների առաջին մեծ հավաքը Նոյեմբերյանում
19 նոյեմբերի
Տոհմակիցների երկրորդ մեծ հավաքը *Վանքում*

2009 թվական

7 հունիսի
Տոհմակիցների երրորդ մեծ հավաքը Դիլիջանում:
2 օգոստոսի
Տոհմակիցների չորրորդ մեծ հավաքը Վանաձորում:
Տեղի ունեցան Հասարակական կազմակերպություն ստեղծելու նախաձեռնող խմբի հավաքներ միության կանոնադրության, կառուցվածքի, տվյալների բազայի ստեղծման, ֆինանսական միջոցների հայթաթման և այլ կազմակերպական հարցերով (10.09.2009 – Մխիթար Գոշ համալսարան, 23.09.2009 – ֆիզիկայի ինստիտուտ, 27.09.2009 – ԱԱՊ, 24.10.2009ԱԱՊ):

2010 թվական

15 մարտի

Գրանիտե սալի վրա փորագրված Չիլինգարյանների /Մամիկոնյանների/ տոհմածառը ամրացվեց Գանձասարի վանական համալիրի պարիսպին

25 հունիս

,,Չիլինգարյան /Մամիկոնյան/ տոհմ,, հասարակական պատմաազգագրական կազմակերպության գրանցումը ՀՀ պետռեգիստրում

17 հուլիսի

ՀԿ հիմնադիր ժողովը նախապատրաստող նախաձեռնող խմբի առաջին նիստը առևտրա-արդյունաբերական պալատում

10 հոկտեմբեր

Հիմնադիր ժողովի նախապատրաստման համար նախաձեռնող խմբի անդամների այցելություններ տոհմական համայնքներ՝ Դիլիջան, Ջուջևան, Նավուր

15 հոկտեմբեր

Հիմնադիր ժողովի նախապատրաստման համար նախաձեռնող խմբի անդամների այցելություն տոհմական համայնքներ՝ Աբովյան, Չարենցավան

18 հոկտեմբեր

Հիմնադիր ժողովի նախապատրաստման համար նախաձեռնող խմբի անդամների այցելություն տոհմական համայնքներ՝ Վարդաբլուր, Վանաձոր

14 նոյեմբերի

ՀԿ-ի առաջին ընդհանուր ժողովի կազմակերպումը «Առնո Բաբաջանյան» սրահում: Կազմակերպության նախագահ ընտրվեց Մելս Չիլինգարյանը (Վանք), պատվավոր նախագահ ընտրվեց Էդվարդ Սարգսյանը: ՀԿ գործադիր տնօրեն նշանակվեց Աշոտ Չիլինգարյանը (Բերդ): Ընտրված 33 ավագանու անդամները հրավիրեցին ավագանիների խորհրդի անդրանիկ նիստը:

2011 թվական

20 փետրվարի

Թբիլիսի քաղաքում Չիլինգարյանների հանդիպումը Վրաստանի Դաղեթ, Սամղերեթի, Շահումյան գյուղերի և Թբիլիսիի տոհմակիցների հետ:

15 ապրիլի

Չիլինգարյանների այցը Նորքի տուն-ինտեռնատ՝ ծերանոցի պատերը նկարազարդած, Թամանյան դիվիզիայի կազմում Բեռլին հասած Գուրգեն Չիլինգարյանի հետքերով:

23 ապրիլի

«Դյուցազնագրքի» հանձնաժողովի և «Չիլինգարյան (Մամիկոնյան) տոհմ» ՀԿ նախաձեռնությամբ անցկացված միջոցառմանը Կարեն Կարապետյանը « մեջքին պառկած, ձեռքերը կիսածալված դրությունից բարձրանալով արտակորում դեպի առաջ» վարժությունը անընդմեջ կատարեց 4137 անգամ 3 (երեք) ժամ 2 (երկու) րոպե ժամանակահատվածում՝ սահմանելով այդ վարժության կատարման նոր ռեկորդ, որը գրանցվել է հայկական ,, Դյուցազնագրքում,,

24 ապրիլի

Չիլինգարյանների առաջին տոհմական երթը դեպի Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի հուշահամալիր:

2 օգոստոսի

Չիլինգարյանների երկրորդ ճանաչողական այցը Վանք, հանդիպում տոհմակիցների հետ:

21 սեպտեմբերի

Արմեն Սուրենի Չիլինգարյանը (Ստեփանավան) լեռնագնացների 20 հոգիանոց խմբի հետ բարձրացավ Մասիս սար և գագաթին ծածանեց ՀՀ պետական դրոշը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 20 – ամյակին:

15 հոկտեմբերի

Կազմակերպվեց ,,Մտքերի տարափ,, կլոր սեղանը Աֆրիկյանների, Բիանջյանների, Բախշյանների, Ափյանների, Կոնջորյանների ներկայացուցիչների մասնակցությամբ:

14 նոյեմբերի

ՀԿ Լոռվա տարածաշրջանի «Տոհմակից» եռամսյա թերթի առաջին համարի տպագրումը:

15 նոյեմբեր

Գործարկվեց հասարակական կազմակերպության chilingar.org կայքը:

24 դեկտեմբերի

Հովհաննես Թումանյանի տուն թանգարանում անցկացվեց ավագների խորհրդի տոնական նիստը և ստեղծագործող Չիլինգարյանների գործերի ցուցադրություն:

2012 թվական

04 հունվարի

ՀԿ նախագահ Մելս Չիլինգարյանը Ֆրանսիայի Նիս քաղաքում առաջին անգամ հանդիպեց Ռուբեն Սևակի եղբորորդու՝Հովհաննես Չիլինկիրյանի ընտանիքի և դստեր՝ Շամիրամի հետ:

24 ապրիլի

Չիլինգարյանների երթը դեպի Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի հուշահամալիր:

19 մայիսի

Տավուշի մարզի գրողների հաշվետվության շրջանակում Գրողների միության շենքում բանաստեղծ, նկարիչ Զավեն Պետրոսյանի / Ջուջևան/ ստեղծագործությունների ցուցահանդեսը:

23 հունիսի

«Տոհմի օր» միջոցառման առաջին տոնակատարությունը Ջրվեժի «Այգ» ռեստորանային համալիրում:

11 հուլիսի

Անուշ Չիլինգարյանի (Դիլիջան) «Հանդիպում» գրքի շնորհահանդեսը Գրողների միությունում:

18 սեպտեմբերի

Չիլինգարյանների խմբակային մասնակցությունը Ախթալայի «Խորոված տոն» առաջին միջոցառմանը:

23 սեպտեմբերի

Չիլինգարյանների տոհմական «Դավոս» առաջին հավաքը Աֆրիկյանների պանդոկում: Ներկայացվեց «Չիլիմարկետ» ծրագիրը

25 հոկտեմբերի

Անուշ Չիլինգարյանի « Հանդիպում» գրքի քննարկում Ռուբեն Սևակի անվան թիվ 151 դպրոցում :

10 նոյեմբերի

Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը հրավիրվեց կազմակերպության երկրորդ ընդհանուր ժողովը: Նույն օրը հրավիրված ավագների խորհրդի նիստում Արտակ Չիլինգարյանը (Արծվաշեն) նշանակվեց, որպես ՀԿ գործադիր տնօրեն:

5 դեկտեմբերի

ՀԿ Տիկնանց Խորհրդի « Մայրական գորովանք» բարեգործական ծրագրի առաջին ուղերթը Հրազդանի, Ճամբարակի տոհմակիցներին:

2013 թվական

30 մարտի

Մի խումբ տոհմակիցների Սուրբ Զատիկի տոնակատարության մասնակցությունը Մուղնիում:

24 ապրիլի

Չիլինգարյանների ավանդական դարձած երթը դեպի Ծիծեռնակաբերդի Մեծ Եղեռնի հուշահամալիր:

17 մայիսի

Հենրիկ Իգիթյանի անվան մանկական գեղագիտական կենտրոնում բացվեց Վազգեն Բաղալյանի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը:

20 հունիսի

Լույս ընծայվեց ՀԿ «Չիլինգար» թերթի առաջին համարը:

29 հունիսի

«Տոհմի օրվա» երկրորդ տոնակատարությունը Վարդաբլուր գյուղում:

10 սեպտեմբերի

Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ կաթողիկոսի օրհնությամբ և Հովհաննես Չիլինկիրյանի մասնակցությամբ տեղի ունեցավ Ռուբեն Սևակի անվան հուշատուն – թանգարանի բացումը Էջմիածինում:

13 սեպտեմբերի

Ռուբեն Սևակի կյանքին և ստեղծագործունեությանը նվիրված երեկոյի անցկացում Նարեկացի Արվեստի Միության սրահում Հովհաննես Չիլինկիրյանի մասնակցությամբ:

18 սեպտեմբերի

Չիլինգարյանների երկրորդ մասնակցությունը Ախթալայի «Խորոված օր» տոնակատարությանը:

6 հոկտեմբերի

ՀԿ Տիկնանց Խորհրդի «Մայրական գորովանք» բարեգործական ծրագրի երկրորդ ուղերթը Քարինջի, Մարցի տոհմակիցներին:

10 նոյեմբերի

Չիլինգարյանների առաջին խմբակային ճանաչողական այցը Էջմիածին՝ Ռուբեն Սևակի հուշատուն – թանգարան:

27 նոյեմբերի

Կարսի վերջին հայ քաղաքապետ Համազասպ Նոհրադյանի (Եղիշե Չարենցի « Երկիր Նայիրի» վեպի Մազութ Համոյի կերպարի պատմական նախատիպը) ծոռուհիներ Նելլի և Անժելա Չիլինգարյանների կողմից նրա անձնական իրերի հանդիսավոր նվիրաբերությունը Չարենցի անվան թանգարանին:

2014 թվական

10 հունվարի

Համահայկական տոհմածառ նախագծի /ղեկավար՝Լիլիթ Մակարյան/ «Ամենամեծ և ամենահին Հայկական տոհմածառ» մրցույթում ՀԿ ներկայացրած տոհմածառը ճանաչվեց հաղթող:

15 փետրվարի

Երևանի թիվ 151 դպրոցում թատերականացված միջոցառում նվիրված Ռուբեն Սևակի ծննդյան օրվան: Վանուշ Չիլինգարյանն իր անձնական գրադարանը նվիրաբերեց դպրոցին:

10 մարտի

Ջուջևան գյուղի Չիլինգարյանների նախաձեռնությամբ համայնքի ավագանին արտահերթ նիստում որոշում ընդունեց գյուղի կենտրոնական փողոցը Ռուբեն Սևակի (Չիլինկիրյան) անունով կոչելու մասին՝ Հայաստանի բնակավայրերում առաջին փողոցը, որ անվանակոչվեց մեծ բանաստեղծի անվամբ:

24 ապրիլի

Չիլինգարյանների տոհմական երթը դեպի Ծիծեռնակաբերդի Մեծ Եղեռնի հուշահամալիր:

28 ապրիլի

«Տարիներն իմ հարստությունն են» խորագրով միջոցառումների շարքի առաջին մեծարման երեկոն Նարեկացի Արվեստի Միության սրահում նվիրված տոհմակից, հայկական լեռնագնացության հիմնադիր, ՀԱՕԿ պատվավոր անդամ, պրոֆեսոր Աղվան Չատինյանին/Վարդաբլուր/:

17 մայիսի

Վազգեն Բաղալյանի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսի անցկացումը Պետական պատկերասրահի Վանաձորի մասնաճյուղում՝ նվիրված ծննդյան 60 –ամյակին:

29 մայիսի

Ճամբարակցի Չիլինգարյանների նախաձեռնությամբ քաղաքի ավագանին որոշում ընդունեց քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը Խորհրդային Միության հերոս Սարիբեկ Չիլինգարյանի /Արծվաշեն/ անունով կոչելու մասին:

30 մայիսի

ԵՊՀ Սոցիոլոգիա ֆակուլտետի Հասարակայնության հետ կապերի բաժնի ուսանող Նվարդ Չիլինգարյանը (Ծակուռի - Հրազդան) պաշտպանեց մագիստրոսական թեզ «Հաղորդակցությունների կառավարման գործիքները տոհմի ինքնության ձևավորման և պահպանման գործում» թեմայով, որի արդյունք որպես ստեղծվեց տոհմի տոհմածառի նորացված, էլեկտրոնային տարբերակը և տեղ գտավ www.chilingar.org կայքում:

21 հունիսի

«Չիլինգարյան – Մամիկոնյան տոհմ» ՊԱ հասարակական կազմակերպության երրորդ ընդհանուր ժողովի անցկացումը Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր- թանգարանի դահլիճում: Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր-թանգարանում բացվեց Չիլինգարյանների տոհմական թեմատիկ մշտական ցուցադրության և ստեղծագործող Չիլինգարյանների գեղարվեստական գործերի ժամանակավոր ցուցահանդեսը: Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրում անցակցվեց «Չինագործ դարբնի օր» առաջին տոնակատարությունը:

11 հուլիսի

Տոհմակիցների առաջին հանդիպումը Չիլինգարյանների տոհմի պատմության և տոհմածառի հեղինակ, նշանավոր գիտնական, ՀԿ պատվավոր նախագահ Էդվարդ Սարգսյանի հետ:

27 հուլիսի

Լոռվա և Տավուշի տարածաշրջանների տոհմակիցների հանդիպումը Էդվարդ Սարգսյանի հետ Վանաձորում:

8 օգոստոսի

Արթուր Չիլինգարյանը (Ջուջևան) նշանակվեց ՀԿ գործադիր տնօրեն:

18 սեպտեմբերի

Երևան, Մոսկովյան 5 հասցեում բացվեց Չիլինգարյանների «Պահոց-թանգարանը» (Տոհմատուն):

12 հոկտեմբերի

Շվեյցարիայից ժամանած Հակոբ Ավագյանը ՀԿ նախագահ Մ.Չիլինգարյանի հետ միասին հանդիպեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ կաթողիկոսին, Ռուբեն Սևակի հուշատուն-թանգարանին հանձնեցին բանաստեղծի ստեղծագործական կյանքին ու գործունեությանը վերաբերվող թանկարժեք նյութեր:

15 հոկտեմբերի

Մոսկվայում առաջին անգամ տեղի ունեցավ ՀԿ նախագահ Մ.Չիլինգարյանի առերես հանդիպումը ԽՍՀՄ և ՌԴ հերոս Արթուր Չիլինգարովի հետ:

01 նոյեմբեր

Հովհաննես Շարամբեյանի անվան ժողստեղծագործության տանը տեղի ունեցավ Հրաչ Հայրապետյանի՝ Սաշի (Դիլիջան) ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսի բացումը:

01 նոյեմբեր

Ավարտվեց ՀԿ /2007-2014/ տարեգրության պատրաստումը:

09 նոյեմբեր

ԼՂՀ մշակույթի նախարարության հայտարարած ,,Տոհմածառ,, մրցույթի ,,Իմ տոհմը,, անվանակարգում կազմակերպությունն արժանացավ երկրորդ մրցանակին և 400000դրամ դրամական պարգևին /մրցույթային փաթեթ ներկայացվել էր 09.09.2014-ին/:

04 դեկտեմբեր

“Տարիներն իմ հարստությունն են” խորագրով միջոցառումների շարքի մեծարման երեկո Նարեկացի Արվեստի Միության սրահում՝ նվիրված ճանաչված բժիշկ, արցախյան պատերազմի վետերան տոհմակից Վանուշ Չիլինգարյանին /Արճիս/:

05 դեկտեմբեր

Լոռու մարզի Մարց գյուղի ավագանու որոշմամբ գյուղի կենտրոնական փողոցն անվանակոչվեց Ռուբեն Սևակի անվամբ:

24 դեկտեմբեր

Լոռու մարզի Քարինջ գյուղի ավագանու որոշմամբ գյուղի կենտրոնական փողոցն անվանվեց Ռուբեն Սևակի անվամբ:

2015 թվական

06 փետրվար

ՀԿ ներկայացուցչական այց ԼՂՀ /Ստեփանակերտ, Վանք/, հանդիպում ԼՂՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Ն.Աղաբալյանի հետ, հարցազրույց Արցախի հեռուստաընկերությունում:

15 փետրվար

Մի խումբ տոհմակիցների մասնակցությունը Էդուարդ և Մհեր Պետրոսյանների /Ջուջևան/ ստեղծագործությունների ցուցահանդեսին /ք.Աբովյան, ,,Արոմա,, սրճարան/, ծաղկադրություն Երևանի թիվ 151 դպրոցի բակում Ռուբեն Սևակի հոշարձանին ծննդյան 130-ամյակի առթիվ:

24 փետրվար

Վանաձոր քաղաքի ավագանու որոշմամբ քաղաքի երիտասարդական պուրակն վերանվանվեց Ռուբեն Սևակի անվան երիտասարդական պուրակի:

24 փետրվար

Մեկօրյա Հայաստան կարճաժամկետ այցելության ընթացքում Երևանի ,,Երևան,, հյուրանոցում մի խումբ տոհմակիցների հանդիպումը Արթուր Չիլինգարովի հետ:

27 փետրվար

Ռուբեն Սևակի ծննդյան 130-ամյակին և ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառում Երևանի թիվ 151 դպրոցում:

05 ապրիլ

Սուրբ զատիկ: Հավաք ՀԿ գրասենյակում: Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված ոսկերիչ-ձևավորող Հրաչ Չիլինգարյանը /Նավուր/ իր պատրաստած անմոռուկ-կրծքանշաններ բաժանեց տոհմակիցներին:

07 ապրիլ

Ստեփանավան քաղաքի ավագանին իր որոշմամբ քաղաքի փողոցներից մեկն անվանակոչեց Ռուբեն Սևակի անվամբ:

18 ապրիլ

Վանաձորում տեղի ունեցավ քաղաքի երիտասարդական այգին Ռուբեն Սևակի անվամբ անվանակոչելու հանդիսավոր արարողությունը: Հանդիսության մասնակիցները ծաղկեպսակ դրին եղեռնի զոհերի հիշատակի խաչքարին, որից հետո Ստեփան Զորյանի տուն-թանգարանում տեղի ունեցավ գրական երեկո նվիրված Ռուբեն Սևակի կյանքին ու գրական գործունեությանը:

24 ապրիլ

Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված Չիլինգարյանների տոհմական երթը դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր տոհմական դրոշով, ցուցապաստառով ներառած Ռուբեն Սևակի խոսքերն ու դիմապատկերը:

13 հունիս

Երևանի Ավետիք Իսահակյանի անվան գրադարանի դահլիճում ,,Տարիներն իմ հարստությունն են,, ծրագրի շրջանակում տեղի ունեցավ մեծարման երեկո նվիրված գրող-մատենագետ, վաստակավոր գրադարանավար, Արցախյան շարժման առաջամարտիկ, ,,Գետաշեն,, հայրենակցական, բարեգործական կազմակերպության նախագահ Ռիտա Չիլինգարյանին /Գետաշեն/:

28 հունիս

Տոհմի օրվա երրորդ տոնակատարությունը Տավուշի մարզի Ջուջևան գյուղում:

12 հոկտեմբեր

ՀԿ գործադիր տնօրեն Արթուր Չիլինգարյանի այցը Ֆրանսիայի Նիս քաղաք. տեսակցություն Հովհաննես Չիլինկիրյանին:

27 դեկտեմբեր

Ամանորին նվիրված տոհմական հանդես ,,Երեվան թայմ,, սրճարանում:

2016 թվական

06 փետրվար

ՀԿ գրասենյակում կայացավ հանդիպում Հայաստանի ազատագրական հայ գաղտնի բանակի /ASALA/ մարտիկ, ,,Վան,, գործողության ղեկավար Վազգեն Սիսիլյանի հետ, ով ներկայացրեց Սիլվա Չիլինկիրյանի մասին իր հուշերից:

12 մարտ

Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնում տեղի ունեցավ Նարինե Չիլինգարյանի ստեղծագործությունների ցուցահանդեսի բացումը:

24 ապրիլ

Չիլինգարյանների տոհմական երթը Ծիծեռնակաբերդի հուշահամալիր ցեղասպանության 101-րդ տարելիցին:

18 ապրիլ

Սահմանին կանգնած զինվորի համար սննդամթերք և առաջին անհրաժեշտության պարագաների հավաքագրման ակցիայի շրջանակում 52 /հիսուներկու/ քնապարկ, 500 /հինգ հարյուր/ ապակե տարայով մրգային ջեմ ուղարկվեց ԼՂՀ պաշտպանության բանակին:

12 մայիս

Տոհմակիցների այցը Եռաբլուրում Հայաստանի ազատագրական հայ գաղտնի բանակի /ASALA/ նահատակ Սիլվա Չիլինկիրյանի /Լիբանան/ շիրմաքարին:

18 մայիս

Եղիշե Չարենցի տուն-թանգարանում տեղի ունեցավ Նելլի Չիլինգարյանի ,,Ովէ Մազութի Համոն,, գրքի շնորհահանդեսը:

29 մայիս

Տոհմի պատանիների մի խմբի /Վարդաբլուր, Ջուջևան, Քարինջ, Ճամբարակ, Երևան/ ճանաչողական էքսկուրսիան Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր թանգարան և Էջմիածնի Ռուբեն Սևակի անվան թանգարան-պատկերասրահ:

25 հունիս

Հռոմի Ֆրանցիսկոս պապի Հայաստան այցելությանը նվիրված մի խումբ տոհմակիցներ այցելեցին Վարդան Մամիկոնյանի հուշարձան և ծաղիկներ խոնարհեցինհավատքի համար նահատակված Մեծ Սպարապետին:

27 հունիս

Գործարկվեց Հասարակական կազմակերպության youtube-ի chilingar tohm էջը:

20 օգոստոս

Դիլիջանում տեղի ունեցավ ,,Տոհմի օր,, ավանդական միջոցառումը / այցելություն Հաղարծին վանքի համալիր/:

09 հոկտեմբեր

,,Էրեբունի-Երևան,, տոնակատարության շրջանակում անց կացվեց զինագործ դարբնի ,,Հրե զարկ,, միջոցառումը:

27 նոյեմբեր

Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ ՀԿ չորրորդ ընդհանուր ժողովը:

2017 թվական

24 փետրվար

Սուրբ աթոռի Ռուբեն Սևակ թանգարանում անց կացվեց Ռուբեն Սևակի ծննդյան 132-ամյակին նվիրված հիշատակման ցերեկույթ:

02 մարտ

,,Երևան թայմ,, պանդոկում տեղի ունեցավ մի խումբ տոհմակիցների հանդիպումը Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուներ Կարեն Չիլինգարյանի /,,Ելք,, դաշինք/ և Շուրիկ Չիլինգարյանի /Ազատ դեմոկրատներ կուսակցություն/ հետ:

24 ապրիլ

Մի խումբ տոհմակիցների այցը Ծիծեռնակաբերդի հուշահամալիր ի հիշատակ Մեծ եղեռնի զոհերի 102-ամյակին:

25 հունիս

Քարինջում /Լոռվա մարզ/ տեղի ունեցավ ,,Տոհմի օր,, ավանդական միջոցառումը:

06 հոկտեմբեր

,,Մայրական գորովանք,, ծրագրի շրջանակում բարեգործական 4-րդ այցելությունը Ճամբարակի տոհմակիցներին:

14 հոկտեմբեր

,,Էրեբունի Երևան-2799,, տոնակատարության շրջանակում անց կացվեց ,,Հրե զարկ,, զինագործ դարբնի փառատոնը:

12 դեկտեմբեր

ՀԿ գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում չինական Xinhua լրատվական գործակալության Թբիլիսիի բյուրոյի թղթակից Լի Մինգի հետ, կապված չինական Մաա ցեղախմբի ու հայկական Մամիկոնյան տոհմի պատմությունների հետ:

2018 թվական

23 հունիս

Տավուշի Նավուր գյուղում տեղի ունեցավ տոհմի օր ավանդական միջոցառումը /հիշատակում զորավար Անդրանիկի արձանի մոտ, տոհմակիցների խմբակային կնունքի ծեսի կատարում Մայր Մարիամ մատուռում/:

23 նոյեմբեր

,,Կայծ,, խորտկարանում տեղի ունեցավ ՀՀ ԱԺ պատգամավորության թեկնածուներ Կարեն Չիլինգարյանի /,,Իմ քայլը,, դաշինք/ և Գարիկ Չիլինգարյանի /,,Մենք, դաշինք/ հանդիպումը մի խումբ տոհմակիցների հետ:

21 դեկտեմբեր

,,Հին Ջրվեժ,, ռեստորանում տեղի ունեցավ մի խումբ տոհմակիցների, տոհմի բարեկամների նախաամանորյա ճաշկերույթ:

2019 թվական

24 ապրիլ

Մի խումբ տոհմակիցների այցը Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիր:

04 մայիս

,,Այլանս ֆրանսեզ,, հասարակական կազմակերպության դահլիճում տեղի ունեցավ Յուրի Աֆյանի ,, Ազգատոհմերի ամբողջացման էվոլյուցիայի առաջին էտապը,, գրքի քննարկումը Բախչյան, Ափյան տոհմերի մասնակցությամբ:

22 հունիս

Զարենցավանում տեղի ունեցավ տոհմի օր ավանդական միջոցառումը: Այն սկսվեց ,,Գանգրահեր տղայի,, արձանի մոտ տարիներ առաջ մարշալ Բաղրամյանի և այլ նշանավոր անձանց կողմից եղևնիների տնկելու ցուցանակի տեղադրմամբ, շարունակվեց էքսկուրսիայով Բջնիի Պահլավունիների ամրոց և եզրափակվեց ճաշկերույթով ,,Մակու,, ռեստորանում:

2020 թվական

21 հունվար

ՀԿ Մուսկովյան գրասենյակը փակվեց, գրասենյակի գույքը ի սպասպանություն տեղափոխվեց ՀԿ նախագահ Մ.Չիլինգարյանի տուն:

25 հունվար

,,Այլանս Ֆրանսեզ,, ՀԿ դահլիճում տեղի ունեցավ Ախալքալաքի խորհրդի նիստ կազմակերպության հեռանալու աշխատանքները բարելավելու նպատակով:

08 հուլիս

ՀԿ գրասենյակում ,,Առաջնորդների զարգացման հիմնադրամ,,-ի հանձնհիմնադիր Արեգնազ Ախնազարյանի աջակցությամբ տեղի ունեցավ հանդիպում հանրային առողջապահության կառավարման միջազգային ճանաչման մասնագետ, պրոֆեսոր Ջոն Չիլինգարյանի հետ /ԱՄՆ/:

ՄԵՐ ՏՈՀՄԱԾԱՌԸ

ԷԴՎԱՐԴ ՍԱՐԳՍՅԱՆ

Քիմիկոս, գրող-գիտնական, Մամիկոնյան-Չիլինգարյան տոհմի պատմության և տոհմածառի հեղինակ